ունիմք. և զնաց հայրն և կրկնեաց զպահքն։ Եւ ասէ ցնա երկրորդ ձայնն. զնա և պահեա զխոստովանութիւնն Պետրոսի և Բարսղի և Գրիգորեանցն. եւ եկեալ ասաց եղբարցն։ Եւ նոքա ասեն, վասն Տեառն, որովհետև գտեր շնորհս Աստուծոյ՝ պարզեա զսիրտս մեր, նոքա ասեն թէ մեք անսղալ ունիմք զդաւանութիւն յիշեալ սրբոցդ։ Եւ դարձեալ սուրբն երրորդեաց զաղօթսն վասն խնդրոյն, և տեսանէր կոնդակս ինչ գրեալ և պարզեալ յերկնից մինչև առ ինքն, եւ գիրն էր այս. ուրացան զիս ժողովն Քաղկեդոնի եւ անցին զսահմանօք ուղղափառացն, վա՜յ է նոցա, եւ նզովք է բաժին նոցա։ Եւ իբրև ընթերցաւ զայս, նա ոչ չոքաւ առ եղբայրսն, այլ երթեալ յերուսաղէմ պատմեաց, եւ շարժեցաւ քաղաքն Երուսաղէմ. եւ հանին զչարափառսն, եւ հանին զՑոբնաղ, եւ եդին զԹէոդորոս. և լուաւ Մարկիանէ, և առաքեաց հաստատեաց զչարափառսն՝ տանջելով զընդդիմացեալսն. և լռեցին, և եղբարքն հաստատեցան» (Գ. Թղ. էջ 516)։

ի) Ս. Քրիստափոր. — Ցորդանանի անդիի կողմը՝ այնտեղ ուր Մարիամ Եգիպտացին 48 տարի ապաշխարած և կատարեալ առանձնութիւն մը կ'ապրէր, Ս. Քրիստափոր կ'օգնէր ճամբորդներուն. հոն էր որ տեղի ունեցաւ հետևեալ դէպքը. օր մը պատանի մը Քրիստափորի կը ներկայանայ գետին անդիի կողմը անցնելու համար և Քրիստափոր կ'առնէ զայն իր լայն ուսերուն վրայ։ Երբ երկուքը հասան արագ և դըժուարին տեղ մը, տղան այնպէս ծանրացաւ որ Քրիստափոր հակառակ իր ոյժին՝ չէր կրնար աւելի առաջ երթալ։ Ի՞նչ է այս աղաղակեց, և ո՞վ ես դուն որ այնքան ծանր կը կշռես։ Ո՛վ Քրիստափոր, պատաս-